

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՅՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Կիրակոս Երզնկացին, որ ապրել և գործել է ԺԳ—ԺԴ դդ., հայ մատենագիտության և հայագիտության քիչ ծանոթ դեմքերից է: Նա շարունակել և զարգացրել է Երզնկայի դպրոցի և նրա մեծ ընթերցողների (Հովհաննես Պլուզ Երզնկացի, Մովսես Երզնկացի) ավանդները Հայ Եկեղեցու համար պատրաստելով կրթված արտասովոր վարդապետներ:

Կիրակոս Երզնկացու կենսագրության մասին քիչ տեղեկություններ ունենք: Ծնվել է 1270¹-ական թվականներին Եկեղյաց գավառի Ագրակ կամ Ագարակ ավանում²: Առաջին անգամ նրա մասին հիշատակվում է 1315 թ. մի ձեռագրի հիշատակարանում³. «... բուրման խնկոց անուշահոտությեան զընթերցանապետս զՅովհաննէս և զԿիրակոս յիշեսցիք ի Տէր...»⁴: Կիրակոս Երզնկացին երկար ժամանակ ապրել է Երզնկայում, որտեղ ծավալել է գրական բեղուն գործունեություն, հաճախ հիշվում է որպես ձեռագրերի ստացող կամ պատվիրատու. 1304 թ. ոմն Ոսկան վարդապետ «ի վանս Գլաճոր Ա. Ստեփանոսին ... ի հոյս հոգնաթիւ աշակերտաց Հայոց...» հիշատակում է նաև Կիրակոս Երզնկացու անունը⁵: Վերջինս իր հերթին 1318 թ. «մեծ ընթերցանապետ բոլոր Հայաստանեայց»⁶ է կոչում Եսայի Նշեցուն: Նոր-Ջուղայի Ա. Ամենափրկիչ վանքին պատկանող 1330 թ. մի Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս հայկազեան

¹ Ծննդյան մոտավոր թվականը վերցրել ենք Ա. Սրապյանից. տես ՀՍՀ, հտ. 3, էջ 450—451:

² Մենք չկարողացանք պարզել, թե որտեղից է հայտնի Ա. Սրապյանին, որ Կ. Երզնկացին ծնվել է Ագրակ կամ Ագարակ ավանում: Տես նույն տեղում, էջ 450:

³ Հ. Քյուրտյանը գտնում է, որ Կ. Երզնկացին առաջին անգամ հիշատակվում է 1317-ին մի հիշատակարանում իբրև ստացող և գրիչ. տես Յ. Քիրտեան, Երիզա կամ Եկեղեցաց գավառ, հտ. Ա, Վեներտիկ, 1953, էջ 225:

⁴ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950 թ., էջ 116:

⁵ Ղ. Ալիշան, Սիսական. Տեղեկագրութիւն Սիւնեաց աշխարհի. Վեներտիկ, 1893, էջ 134:

⁶ Տես Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981 թ., էջ 163:

տոմարիս 22Թ (1330) ի հայրապետութեան Տեառն Հակոբայ եւ ի թագաւորութեան Հայոց Լեւոնի եւ Վրաց Գեորգայ: Եւ ի ղանութեանն Պատաւիրի, յանապատիս Զդանայ՝ ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Աստուածակիր սբ. Նշանացս, ձեռամբ ամենամեղ եւ անարժան ծառայի Աստուծոյ Կիրակոս պիտակ անուն վարդապետի Երզնկացոյ Նժդեհի...»⁷: 1334 թ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 2102 ձեռագրի հիշատակարանում նշված է. «Զստացողս աստուածային մատենիս, գերաշնորհ եւ եռամեծ բարունապետն Կիրակոս»⁸: Զեռագիրը գրված է Երզնկայում:

Կիրակոս Երզնկացու մահվան թվականի մասին վստահելի աղբյուրը Երզնկայում Ստեփանոս երեցի գրած ժողովածուի հիշատակարանն է. «...յիշեսցիք եւ երջանիկ եւ գերիցս երանեալ բարունապետն մեր Կիրակոս վարդապետն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, նոյեմբեր ԺԵ (15) եւ մեզ եթող որքս յայսմ կենցաղս..., գրեցաւ ի թուին Հայոց ՊԵ (1356) յամսեանն մարտի ԺԸ (18)...»⁹: Ըստ Հակոբ Կարնեցու վկայության, Կիրակոսը թաղված է Երզնկայի Ս. Սարգիս եկեղեցում, նրա տապանի վրա կա հետևյալ արձանագրությունը. «... Եւ Կիրակոս վարդապետի, որ Արեւելքն է ասացեալ...»¹⁰:

Կիրակոս Երզնկացու անունով մեզ են հասել բավական թվով ստեղծագործություններ: Զեռագրերի եւ ձեռագրացուցակների ուսումնասիրությունից պարզել ենք, որ պահպանվել են հետևյալ գործերը .

Ա. Նախերգան Տեառնընդառաջին Կիրակոս վարդապետի ասացեալ

Բարոյախրատական գործ է: Ծառն սկսվում է գովեստով ուղղված Քրիստոսին համարյա ամբողջությամբ պատմում է Ավետարանը: Վերջին հատվածում լուսաբանում է մի շարք դավանաբանական հարցեր, ցույց է տալիս, թե ինչ մեծ մեղք է դավանափոխ լինելը:

Այս գործը մեզ է հասել հետևյալ ձեռագրերում.

Մ. Մ. ձեռ. № 2167. Քարոզգիրք, վայր՝ անհայտ, գրիչ՝ Թորոս Տարոնեցի, ստացող՝ Մարտիրոս քհն. Սանահնեցի, 1346 թ., 245ա—267ա:

Մ. Մ. ձեռ. № 2178, ժողովածու, վայր՝ Տաթև, գրիչ եւ ստացող՝ Հակոբ Ընշտունցի, ԺԴ դ., 348բ—357բ:

Բ. Կիրակոս վարդապետի ասացեալ ի բանն, որ ասէ՝ ի սկզբանէ էր Բանն

Մեկնողական խրատական բնույթի գործ է: Խոսում է արարչագործության մասին: Եվ Հայրը, եւ Ողիին, եւ Սբ. Հոգին հավասար բնությամբ Աստված են: Անդրադառնում է նաև մարդկանց եւ Աստուծո կապին, օրենքի կարևորությանը եւ այլ հարցերի: Վերջին հատվածը ունի խրատական բնույթ:

Առկա է հետևյալ ձեռագրերում.

⁷ Տեա **Ս. Տ. Ավետիսյան**, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր-Զուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա., Վիեննա, 1970, էջ 66:

⁸ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց **Լ. Ս. Խաչիկյան**, Երևան, 1950 թ., էջ 332:

⁹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց **Ն. արք. Պողարյան**, հտ. Դ, Երուսաղեմ, 1969 թ., էջ 384:

¹⁰ **Հակոբ Կարնեցի**, Տեղագիր վերին Հայոց, տեա Մանր ժամանակագրություններ ԺԳ—ԺԵ դդ., կազմեց **Վ. Ս. Հակոբյան**, Երևան, 1956 թ., էջ 551:

Մ. Մ. ձեռ. № 1098. ժողովածու, գրիչ՝ Մխիթար, վայր՝ անհայտ, 1320 թ. 110ա—141բ:

Մ. Մ. ձեռ. № 933, ճառընտիր, վայր՝ անհայտ, գրիչ՝ Մկրտիչ, ստացող՝ Ծերուն քհն., ԺԵ դ., 136բ—151ա:

**Գ. Կիրակոս սուրբ վարդապետի արարեալ ի սաղմոսն ՃԹ (109)
որ ասէ. «Ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ մինչև եդից
(գթշնամիս քո պատուանդան ոտից քոց)»**

Խոսում է Քրիստոսի հայտնության, համբարձման և Ավետարանի քարոզության մասին: Քրիստոսի հարությանը սկսվում է խաչի թշնամիների պարտությունը: Սուրբ Հոգու իջմամբ սկսվում է առաքյալների հաղթարշավը աշխարհում:

Հայտնի է գործի մեկ ընդօրինակություն՝

Մ. Մ. ձեռ. № 4139, Տօնապատճառ. վայր՝ Հաղպատ, գրիչ՝ Հովսեփ, Տիրաչու, Գրիգոր, ԺԴ դ., 372—378բ:

**Դ. Ի քան որ ասէ «Զայն Տեառն ի վերայ ջուրց և Աստուած
փառաց որոտաց և Տէրն ինքն ի վերայ ջուրց բազմաց
Կիրակոս վարդապետի Երզնկեցոյ արարեալ**

Հեղինակը նախ խափում է նյութի, նրա ծագման, արարման մասին: Հետաքրքիր է, որ Երզնկացին այս գործում օգտագործել է մտքեր Պլատոնից, Սոկրատից, Դիոնիսոս Արիստոփանից և ուրիշներից: Սակայն նրանց փիլիսոփայական այս կամ այն դրույթը նս. մեկնաբանում և բացատրում է Ավետարանական ճշմարտությամբ:

Նույնպես հայտնի է մեկ ընդօրինակությամբ.

Մ. Մ. ձեռ. № 2167. Քարոզգիրք, վայր՝ անհայտ, գրիչ՝ Թորոս Տարոնեցի, ստացող՝ Մարտիրոս Սանահնեցի, 1346 թ., 61ա—90բ:

Ե. Խրատ ուղղափառ հաւատացեալսն

Խրատն ունի ընդհանրական բնույթ, ուղղված է բոլորին. «ընդհանուր ամենայն հաւատացեալ որդիքն, քահանայիցդ և կրանաւորացդ վն զինուորեալ մանկանցդ...»:

Ըստ բովանդակության բաժանված է մի քանի մասերի. ա. Նախաբան, որտեղ հորդորում է լինել լուսավոր «բանն կենաց», ունենալ «ի պարծանս»:

բ. Խրատներ՝ ուղղված բոլորին: Նախ նշում է մեղքերը, որոնց մեջ ընկնելով մարդ հեռանում է Աստծուց:

գ. Խրատներ՝ ուղղված քահանաներին. «զամենայն քահանայիցդ եկեղեցոյ, որ ժիր կենաք ի գործ և ի մշակութիւն եկեղեցոյ»:

Պահպանվել է սույն «Խրատի» 10 ընդօրինակություն.

Մ. Մ. ձեռ. № 2542. վայր՝ Ակնանեաց վանք, գրիչ՝ Զաքար արեղա, 1470 թ., 99բ—110բ:

Մ. Մ. ձեռ. № 8727. ժողովածու. գրիչ՝ անհայտ, ստացող՝ Հակոբակ, Ժամանակ՝ ԺԵ դ., 301ա—313բ:

Մ. Մ. ձեռ. № 3050. ժողովածու, վայր՝ Թվան գյուղ, «Կարին», գրիչ և ստացող՝ Ղուկաս սրկ., 1593 թ.:

Մ. Մ. ձեռ. № 1720. ժողովածու, գրիչ՝ Հովհաննես, 1720 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2939. ժողովածու, գրիչ և ստացող՝ Մարտիրոս Ավետիքով Կաֆացի, վայր՝ Հռուսաց գյուղ՝ Նովիտաց, Նոր-Նախիջևան, Նորաշեն. 1774—1799 թթ.:

Երուսաղեմի Ա. Հակոբյանց Մատենադարանի¹¹ ձեռ. № 1136. ժողովածու, գրիչներ՝ Գրիգոր վրդ. Սարգիս կրնվր. Նորատունկ դպ. 1621 թ.¹²:

Եղմ. ձեռ. № 1454, Քարոզգիրք, գրիչ մեկ մասի՝ Անդրեաս, ստացող՝ Գրիգոր քհն., վայր՝ անհայտ, ԺԷ դ.¹³:

Եղմ. ձեռ. № 182, գրիչ՝ Կեսարացի Պետրոս վրդ. Աստուածատրեանց, վայր՝ Կ. Պոլիս, 1790 թ.¹⁴:

Վեներտիկի Մխիթարյան մատենադարանի ձեռ. № 241. Ոսկեփորիկ. գրիչ՝ Խաչատուր աբեղա, ստացող՝ Տեր Գրիգոր, վայր՝ Կապուսի վանք, 1495 թ.¹⁵:

Հռոմ. Հայոց Ա. Վլասի ձեռ. № 38. ժողովածու, գրիչ՝ Միքաել Սանոսյան, վայր՝ Կարին, ԺԵ դ.¹⁶:

Զ. Լուծմունք հարիրաւոր թուոցն Եւագրեայ¹⁷

Երզնկացու այս երկը տես հետևյալ ձեռագրերում:

Մ. Մ. ձեռ. № 1980. ժողովածու, գրիչ՝ Մովսես քհն., ստացող՝ Հովհաննես Վարդենիսցի, վայր՝ Երզնկա, ժամանակ՝ 1391 թ.:

Մ. Մ. ձեռ. № 518. ժողովածու, վայր՝ Հալեպ, գրիչ և ստացող՝ Դավիթ, ԺԸ դ.:

Մ. Մ. ձեռ. № 1430, Գիրք պատճառաց և լուծմանց, գրիչ՝ Վարդան Հիզանցի, կազմող՝ Գրիգոր, ստացող՝ Բարսեղ վրդ., վայր՝ Բաղեշ, 1617 թ.:

Մ. Մ. ձեռ. № 6462. ժողովածու, վայր՝ Երուսաղեմ, գրիչ և ստացող՝ Շապին Գարահիսարցի, ժամանակ 1807—1808 թթ.:

Մ. Մ. ձեռ. № 1812. ժողովածու, վայր՝ Կ. Պոլիս, գրիչ՝ Բրաբիոն, 1780 թ.:

Եղմ. ձեռ. № 132. 1354 թ.¹⁸, 161—279:

Եղմ. ձեռ. № 620. 1354 թ.¹⁹, 1ա—371բ:

Եղմ. ձեռ. № 1407. գրիչ՝ Սիմեոն, 1354 թ.²⁰, 3ա—87բ:

Եղմ. ձեռ. № 2616. ժողովածու, վայր՝ Երուսաղեմ, ստացող՝ Մարտիրոս վրդ., 1668 թ.²¹:

¹¹ Այսուհետև Եղմ.

¹² Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց, կազմող Ն. արք. Պողարեան, հ. Դ, Երուսաղեմ, 1969 թ., էջ 211 (այսուհետև Ցուցակ Երուսաղեմի):

¹³ Ցուցակ Երուսաղեմի, հտ. Ե, 1967 թ., էջ 109:

¹⁴ Ցուցակ Երուսաղեմի, հտ. Ա, 1967 թ., էջ 539:

¹⁵ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1921 թ., հտ. Բ, էջ 93:

¹⁶ Ցուցակ ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի ի Ա. Վլաս և Լեոնեան հայոց վարձարանի, կազմեց՝ Ներսես Ակինյան, Վիեննա, 1961, թ., էջ 27:

¹⁷ Այս գործի մանրամասն քննությունը տես Բ. Սարգիսյան, Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք և մատենագրութիւնք ի հնգերորդ դարու, Վեներտիկ, 1907 թ.:

¹⁸ Ցուցակ Երուսաղեմի, Ա, էջ 831:

¹⁹ Նույն տեղում, Գ., էջ 21:

²⁰ Նույն տեղում, Ե, էջ 220:

²¹ Նույն տեղում, Ե, էջ 448:

Եղմ. ձեռ. № 1635, ժողովածու, ստացող՝ Բարսեղ կրոնավոր, ԺԷ դ.²²:

Եղմ. ձեռ. № 1828, ժողովածու, վայր՝ Ս. Յակոբ, Երուսաղեմ, գրիչ՝ Մարտիրոս, ստացող՝ Սուքիաս վրդ., 1875—1877 թթ.²³:

Ղալաթիայի ձեռ. № 55, Հավաքածո, ԺԷ դ.²⁴:

Ղալաթիայի ձեռ. № 84, Հավաքածո, վայր՝ Ս. Յակոբ, Երուսաղեմ, գրիչ՝ Երեմիա երեց, ստացող՝ Սուքիաս վրդ., 1675 թ.²⁵:

Ղալաթիայի ձեռ. № 115. Հավաքածո, վայր՝ Ս. Յակոբ, Երուսաղեմ, գրիչ՝ Երեմիա երեց, ստացող՝ Սուքիաս վրդ., ԺԷ դ.²⁶:

Վիեննայի ձեռ. № 525. գրիչ՝ Ալեքսան, վայր՝ Կ. Պոլիս, 1749 թ.²⁷:

Անկյուրիայի ձեռ. № 628. Հավաքածո, գրիչ՝ Ծիրինյան Մովսես վրդ., Անկյուրիո առաջնորդ, վայր՝ Կարմիր վանք, 1700 թ.²⁸:

Է. Կիրակոս վարդապետ Երզնկեցույ ասացեալ ի Սուրբ Աստուածածինն—Աստուածածին տաճար բանին բարեխոսեա առ Միածինն...

Այս գործը պահպանվել է միայն հետևյալ ձեռագրերում, ուստի և նրա բովանդակությունը մեզ ծանոթ չէ:

Վենետիկի Մխթր. ձեռ. № 258. Ոսկեփորիկ, ԺԲ—ԺԳ դդ.²⁹:

Ը. Կիրակոս վարդապետի ասացեալ Է Աստուածածնի վերափոխման—Արևելք գերարփին...

Այս շարականը կա մեր բոլոր շարակնոցներում: Այն մեր վերջին շարականն է, որը մտել է Կանոնի մեջ:

Թ. Յաղագս Ը (8) խորհրդոյն Եւագրեայ

Հեղինակը խոսում է այն ութ մեղքերի մասին, որոնք առավել սարսափելի են մարդու համար. ա) որովայնամոլություն, բ) պոռնկություն, գ) արծաթասիրություն, դ) տրտմություն, ե) բարկություն, զ) ձանձրություն, է) սնափառություն, ը) ամբարտաւանություն:

Այս գործը տես հետևյալ ձեռագրերում.

Մ. Մ. ձեռ. № 4040. ժողովածու, գրիչ՝ Գրիգոր աբեղա, ստացող՝ Մըկըրտիչ 1474 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2542, ժողովածու, գրիչ՝ Զաքար աբեղա, կազմող՝ Մելքիսեդեկ, վայր՝ Անկունեաց վանք, 1476 թ.:

Մ. Մ. ձեռ. № 6832. ժողովածու, ԺԵ դ.:

²² Նույն տեղում, Բ, էջ 54:

²³ Նույն տեղում, Ե, էջ 61:

²⁴ Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանին, Անթիլիաս, 1961, էջ 273:

²⁵ Նույն տեղում, էջ 550:

²⁶ Նույն տեղում, էջ 592:

²⁷ Ցուցակ ձեռագրաց Մխիթարեանց ի Վիեննա, Ա, 1895:

²⁸ Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանից և շրջակայից, Անթիլիաս, 1977, էջ 704:

²⁹ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Բ. Վենետիկ, 1924:

Ղալաթիայի ձեռ. № 481. Հավաքածո, գրիչ և ստացող՝ Ղազար վրդ., 1475 թ.³⁰:

Եղմ. ձեռ. № 1407, 1354 թ.³¹:

Եղմ. ձեռ. № 1363. Ժողովածու, գրիչ՝ Անդրեաս, ԺԸ³²:

Եղմ. ձեռ. № 1262. Ժողովածու, գրիչ՝ Տոնական, 1378 թ.³³:

Եղմ. ձեռ. № 589. Ժողովածու, 1668 թ.³⁴:

Ժ. Թուղթ առ Կարնեցիս³⁵

Առայժմ այստեղ չենք անդրադառնա Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» երկի բովանդակությանը: Կներկայացնենք այն ձեռագրերը, որոնց հիման վրա կազմել ենք «Թղթի» գիտական բնագիրը: Նախ կներկայացնենք տասնմեկ այն ձեռագրերը, որտեղ «Թուղթը» հատվածական ընդօրինակությամբ է, որոնք ձեռագրացուցակներում կամ հենց ձեռագրերում վերնագրված են այլ կերպ, կրում են բովանդակային բնորոշումներ և խորագրեր.

Մ. Մ. ձեռ. № 2335. Ժողովածու, գրիչ՝ Կարապետ քհն., վայր՝ Երուսաղեմ, 1476 թ.³⁶:

Մ. Մ. ձեռ. № 1054, Ժողովածու, գրիչ՝ Անտոն, ԺԵ դ.:

Մ. Մ. ձեռ. № 4070. Ժողովածու, գրիչ՝ Վարդան կրոնավոր, վայր՝ Իլով, 1553 թ.:

Մ. Մ. ձեռ. № 4251. Ժողովածու, գրիչ՝ Ստեփանոս, ԺԶ դ.:

Մ. Մ. ձեռ. № 1177, Ժողովածու, գրիչ՝ Զաքարիա Զուղայեցի, Հարություն Սեբաստացի, ստացող՝ Զաքարիա Սեբաստացի, վայր՝ Կ. Պոլիս, 1653 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2606. Ժողովածու, գրիչ՝ Հովհան Երեց, 1678 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2251, Ժողովածու, գրիչ և ստացող՝ Հովհաննես վրդ., 1694—1698 թթ.:

Մ. Մ. ձեռ. № 2268. Ժողովածու, գրիչ՝ Կարապետ քհն., Դավիթ Եվդոկացի, ստացող՝ Դավիթ Եվդոկացի, վայր՝ Ադանա, 1685—1689 թթ.:

Մ. Մ. ձեռ. № 6509, Ժողովածու, գրիչ՝ Սիմեոն, Դավիթ, ԺԷ դ.:

Զմմատի ձեռ. № 563. Ժողովածու³⁷, գրիչ՝ Հովհաննես, ԺԷ դ.³⁸:

Վենետիկ, ձեռ. № 251. Ոսկեփորիկ³⁹, ստացող՝ Պարոն, ԺԲ դ.⁴⁰:

³⁰ Ղալաթիոյ, էջ 706:

³¹ Ցուցակ Երուսաղեմի, Ե, էջ 61:

³² Նույն տեղում, Դ, էջ 109:

³³ Նույն տեղում, Դ, էջ 438:

³⁴ Նույն տեղում, Գ, էջ 589:

³⁵ Սույն թղթին մտադիր ենք անդրադառնալ առանձին հոդվածով:

³⁶ Այս ձեռագրում հատվածը, որ մկրտության մասին է, սկզբի մասով և վերջաբանով մի փոքր տարբեր է մեր բնագրի նույն հատվածի համեմատ. մեր կարծիքով այս տարբերությունները հետագա գրչի միջամտության արդյունք է:

³⁷ Մայր ցուցակ Զմմատի վանքի, Բ, էջ 17:

³⁸ Այս բնագրում կա մի վերջավորություն, որ ևս անձանոթ է մեզ, քանզի չկա մեր բնագրում:

³⁹ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց ի Վենետիկ, 1924 թ. հտ. Բ:

⁴⁰ Հավանաբար ԺԲ դարի այս ձեռագրում հետագայում ավելացվել է Երզնկացու նշված գործը:

Այժմ կներկայացնենք այն ձեռագրերը, որոնց հիման վրա կազմել ենք «Թղթի» գիտական-համեմատական բնագիրը:

Մ. Մ. բնագիր-Ձեռագիր № 705. ժողովածու, վայր՝ Կիլիկիա, գրիչ՝ Սարգիս, ժամանակ ժԴ դ.:

Մ. Մ. ձեռ. № 639. ժողովածու, գրիչ՝ Հովհաննես երեց, ստացող՝ Գրիգոր քին. Խասմելիք, Արմա-խաթուն, ժամանակ՝ 1409 թ.:

Մ. Մ. ձեռ. № 6608. Ծառընտիր, ստացող՝ Յոհաննես քին., որդի Ամիր Բսկերչի, ժամանակ ժԵ:

Մ. Մ. ձեռ. № 728. ժողովածու, վայր՝ Ծառախ (Գանձակ), գրիչ՝ Ռհանես, ժամանակ՝ 1621 թ.:

Մ. Մ. ձեռ. № 614. ժողովածու, գրիչ՝ Սիմեոն, ստացող՝ Պաղում Ծուղեցի, ժամանակ՝ 1625 թ.:

Մ. Մ. ձեռ. № 4063, ժողովածու, վայր՝ Արթիանապոլիս, գրիչ՝ Մինաս Էտերենցի, ստացող՝ Եփրեմ վրդ., ժամանակ՝ 1694 թ.:

Մ. Մ. ձեռ. № 2283, ժողովածու, գրիչ՝ Յակոբակ, ժամանակ՝ ժԸ դ.:

Մ. Մ. ձեռ. № 6302, ժողովածու, ժամանակ՝ ժԸ դ.:

Մ. Մ. ձեռ. № 2715. ժողովածու, գրիչ՝ Յակոբ, Յովակիմ կրոնաւոր, ժամանակ՝ ժԹ դ.:

Մ. Մ. ձեռ. № 774. ժողովածու, վայր՝ Քոթահիա, գրիչ՝ Անտոն Քոթահիացի, Գրիգոր, ստացող՝ Ներսես Տաթևացի, ժամանակ՝ ժԹ դ.:

Ինչպես տեսնում ենք Կիրակոս Երզնկացին իր համեստ տեղն ունի հայ բազմադարյան մատենագրության մեջ և արժանի է լուրջ ուսումնասիրության:

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՅՈՒ «ԹՈՒՂԹ ԱՌ ԿԱՐՆԵՑԻՍ» ԵՐԿՐ.

Գործի ստեղծման ժամանակը:—Իկոնիայի սուլթանության կործանումից հետո նրա տարածքում առաջանում են մի շարք էմիրություններ. «... Երկուսը դրանցից ավելի ուժեղ էին և զավթող: ԺԴ դարի 20-ական թվականներին, երբ օսմանյան թուրքերը նվաճելով Փոքր Ասիայի բյուզանդական գավառները, շարժվում էին դեպի Մարմարի ծով, սելջուկ թուրքերն ու կարաման թուրքերն սկսեցին արշավել Կիլիկիա»¹: Այս արշավանքների մասին արժեքավոր տեղեկություն է հաղորդում Գրիգոր Կարնեցի եպիսկոպոսը. «Եւ արդ, մինչ է (թուական) Հայոց 2 և Հ (1321) ամպարիշտն ոմն յազգէն Նետողաց, որում անուն Դամուրտաշ ասի, այսինքն Երկաթաքար, անօրէնն գայ յաշխարհն Հոռոմոց, և տեսեալ զերկիրն Հայոց զԿիլիկիա, զի որպէս ճիւղ մի ձիթենոյ մնացեալ դադարէին ի նեղ և ի յանձուկ և ի խորշակահար երկրին: ...Եւ անօրէն Երկաթաքարն այն մտեալ յերկիրն հայոց՝ բազում հետեւալօք և ձիաւորոք և բազում աւերմունս արարին...»²: Այս արշավանքի մի այլ նկարագրող՝ Ներսես Պալիանենցը գրում է, որ Դամուրտաշը «աւելի քան 30000 հեծելօք և բազում հետեւալօք, այսինքն՝ ամենայն ուրտուիւն իւր յակամայ

¹ Գ. Գ. Микаелян, История киликийского армянского государства, Ереван, 1952 г., стр. 447.

² Ղ. Ալիշան, Հայապատում, Պատմիչք և պատմութիւնք Հայոց, մասն Բ, Վենետիկ, 1901, էջ 530:

և բռնութեամբ ի աշխարհի Հայոց Կիլիկիա մտաւ և բազում աներ արար, սպանութիւն և աւար....»³:

Այժմ ներկայացնենք Դամուրտաշին և բացատրենք, թե ինչ կապ ունի այն մեր ուսումնասիրության առարկա Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» գործի գրության ժամանակի պարզման հարցում:

«ԺԴ դարի 20-ական թվականների սկզբին Կարամանիայում* իշխում էր Աբու-Սաիդի վեզիր Չուբանի որդի Դամիրտաշը...»⁴, որը 1320—1323 թվականներին Եգիպտոսի սուլթան Նափիրի դրդմամբ արշավեց դեպի Կիլիկիա և նրա հյուսիսային շրջանները: Ահա այս Դամիրտաշի արշավանքների մասին հպանցիկ ակնարկ կա Կ. Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» գործում, որտեղ հեղինակը խոսելով ժամանակաշրջանի խառնակ վիճակի մասին, հուսադրում է կարնեցիներին, թե, իրավ, ձեզ մոտ կա ներքին պատերազմ, «սուտ եղբարց» դեմ, քայց, ասում է հեղինակը մեզ մոտ էլ խաղաղ չէ. «այլ աներումն ու պաշարումն և սպանուն և գերութիւն և հրձիգութիւն բազմապատիկ կրեցաք, զի մնացեալն ի մարախոյ Տամուրտաշ կոչեցելոյ եկեր թիթուրն...»⁵: Այս ակնարկի և վերը ներկայացված պատմական իրողությունների համադրմամբ, կարող ենք եզրակացնել, որ կարնեցիներին ուղղված իր կարևոր ուղերձը Կ. Երզնկացին գրել է Դամուրտաշ թաթարի Կիլիկիա արշավանքից անմիջապես հետո՝ 1323 թ. կամ ամենաուշը 1324 թվականին:

«Առ արնեցիս» թղթի գրության շարժառիթը:—Այժմ, երբ բավական ճշգրիտ մոտավորությամբ գիտենք այս երկի ստեղծման ժամանակը, առավել հեշտ է ներկայացնել պատմական այն իրադարձությունները, որոնց թելադրանքով էլ մեր հեղինակը շարադրել է հետագայում շրջաբերականի նըշանակություն ստացած իր թուղթը: Այս իրադարձությունների ամբողջությունը հայ պատմագիտությունը կոչել է «միարարական» (ունիթորական) շարժում, որով պայմանավորված էր մեր հեղինակի մերձավորագույն մախորդներ Ստ. Օրբելյանի («Հականառություն» արևելյան վարդապետների՝ նըրա ղեկավարությամբ գրված պատասխանը Կիլիկյան վերնախավին) և Մովսես Երզնկացու («Ընդդիմադրություն սակս ջրոյ խառնման») նույնաբնույթ երկերը: ԺԴ դարում խաչակրաց արշավանքներից հետո Կիլիկիայի հայկական թագավորության շուրջ առաջանում են լատինական ծագում ունեցող մի շարք թագավորություններ և դքսություններ, որոնք Կիլիկյան թագավորների հետ ստեղծում են մշակութային, առևտրական և քաղաքական սերտ կապեր, այս կապերը ինչպես ցույց է տալիս ակադ. Լ. Խաչիկյանը, ունեցան իրենց թե դրական, և թե բացասական կողմերը:

Նախ, ինչպես նկատում է Լ. Խաչիկյանը, «Հայ գիտական միտքը մինչև ԺԴ դարի 30-ական թվականները սնվում էր հին հունական գիտական գրականության այն փշրանքներով, որ շրջանառության մեջ էր դրվել Ե—Ը դարերի ընթացքում՝ հունարան դպրոցին պատկանող գիտնական թարգմանիչ-

³ Նույն տեղում, էջ 532. հմմ. Մանր ժամանակագրություններ, հտ. Բ, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 188:

* Շրջան Փոքր Ասիայում. տե՛ս Энциклопедический словарь. изд. Ф. А. Брокгауза и И. А. Ефранъ, С. Петербургъ, 1895, т. 27, стр. 439.

⁴ Դ. Դ. Микаелян, նշված աշխատ., էջ 447:

⁵ Տես բնագիր, էջ 1:

⁶ Լ. Խաչիկյան, Քոնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցի—Յովհաննես Քոնեցի, Յաղագս քերականին, Երևան, 1977, էջ 17:

ների կողմից»⁷: Սակայն ԺԴ դարի կեսերից սկսվում է լատիներենից հայերեն թարգմանվել Թովմա Աքվինացու, Նիկողայոս Լյուտացու, Բոնավենտուրայի և այլոց գործերը:

Անշուշտ այս փոխադարձ կապերը միայն հայերի համար չէին օգտակար, նրանք բավական նպաստավոր եղան մասնավորապես մշակույթի և գիտական մտքի համար՝ Արևելքի մշակույթի հետ ուղղակի շփումը հող նախապատրաստեց եվրոպական վերածննդի համար:

Իսկ այս հարաբերությունների բացասական կողմը հայ ժողովրդի համար այն էր, որ սկսած ԺԳ դարից կիլիկյան հայ թագավորները, հատկապես Հեթումյանները, իրենց պետության պահպանման համար հայացքները հանեցին Եվրոպա՝ Վատիկան, որը բացի խոսքերից ոչնչով չկարողացավ և չցանկացավ օգնել Հայաստանին, ընդհակառակը, հայ ժողովրդի մեջ գցեցին երկպառակություն և դավանաբանական վեճեր:

ԺԳ դարի վերջի և ԺԴ դարի հայոց կաթողիկոսներ Գրիգոր Անավարզեցին և Կոստանդին Կեսարացին ջանք չէին խնայում հայ եկեղեցին Վատիկանին ենթարկելու համար: Հայ ժողովուրդը բաժանվեց երկու մասի՝ ազգային ուժեր, որոնք անգիջում պայքար էին մղում հայ եկեղեցու ավանդության և դավանության պահպանման համար: Այս մասի գլուխ էին կանգնած թուն Հայաստանի վարդապետներն ու իշխանները. «Հաւան եմք մեք ընդ հարսն մեր ի դժոխս իջանել, եւ ոչ ընդ հոռոմոց յերկինս ելանել...»⁸: Այս էր նրանց կարգախոսը, որ այսքան գեղեցիկ ու դիպուկ ձևակերպել էր Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը: Մյուս մասը՝ միաբարներ, որոնք հակում ունենալով դեպի Եվրոպան՝ Վատիկանը, ձգտում էին ամեն գնով գլուխ բերել հայ և կաթոլիկ եկեղեցիների միության հարցը, որն անշուշտ, վնասում էր մեր եկեղեցուն ու ժողովրդին:

Մինչև ԺԳ դարի վերջը կաթոլիկները բավական զգույշ էին մոտենում հայ ժողովրդի դավանափոխ լինելու հարցին, սակայն Կիլիկյան թագավորության անկումից հետո Վատիկանը բացարձակ սկսեց ստիպել հայերին դավանափոխ լինել, ընդունել Հռոմի գերագահությունը:

Միաբարական շարժումը բուռն կերպով սկսում է զարգանալ և տարածվել հատկապես Հայաստանի հարավային, հյուսիս արևմտյան շրջաններում և Կիլիկիայում:

Կաթոլիկների համար վիճակն ավելի բարենպաստ դարձավ, երբ 1318 թ. Հովհան ԻԲ պապի կոնդակով Արևելքում ֆրանցիսկյաններին փոխարինելու եկան դոմինիկյանները: Սուլթանիա պապական կենտրոնից կաթոլիկ բարոգիչները մեծ հաջողությամբ սկսում են կաթոլիկացնել ոչ միայն առանձին համայնքներ ու գյուղեր, այլ ամբողջ շրջաններ:

Խոսելով կրոնափոխ հայերի մասին, ապա նրանք ամեն կերպ ձգտում էին արդարացնել իրենց ազգավնաս գործունեությունը. «... չենք զհայրենի ցանկն քակել, ապա Աստուծոյ գրոցն սահմանն զսուրբ հարցն կու պահենք...»⁹:

Միաբարական շարժման հետ միաժամանակ ծնունդ է առնում հակամիաբարական հոսանքը. սրանք այն հոգևորականներն ու աշխարհականներն

⁷ Նույն տեղում, էջ 9:

⁸ Նույն տեղում, էջ 18:

⁹ ՄՄ ձեռ. № 2037, Գրիգոր Անավարզեցի, Թուղթ, էջ ԺԷ:

էին, որոնք կաթոլիկության քողի տակ տեսնում էին նրա իրական դեմքը, նրա նպատակները հանձին կաթոլիկության նրանք տեսնում էին Հայ եկեղեցու կործանումը, հայ ժողովրդի ձուլումը և ազգային ավանդության վերացումը: Այս շրջանում և հետագա դարերում հայոց պատմության ասպարեզում երևում էին ազգային ավանդների հզոր պաշտպաններ. Սյունյաց մետրոպոլիտներ Ստեփանոս և Հովհան Օրբելյանները, Ներսես Մշեցին, Եսայի Նշեցին, Հովհաննես Երզնկացին, Մովսես Երզնկացին, Կիրակոս Երզնկացին, Մաղաթիա Ղրիմեցին, ավելի ուշ Գրիգոր Տաթևացին և ուրիշներ: Առաջ են գալիս նաև դպրոցներ, մշակութային-հոգևոր կենտրոններ, որոնք համառ և երկարատև պայքար են մղում ունիթորների դեմ. այդ դպրոցներից են Սյունյաց առաջնորդարանը, Գլաձորի և Տաթևի համալսարանները և այլք: Առաջանում է հարուստ հակաճառական գրականություն, որը բազմացվում, տարածվում է ժողովրդի մեջ: Այդպիսի կարևոր գործեր են Ստեփանոս Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկբնակաց, շարադրեալ ի թուին Հայոց ԶԾԱ»¹⁰, Մովսես Երզնկացու «Ընդդիմութիւն սակս ջրոյն ի Սուրբ խորհուրդն ի թուին Հայոց ԶԾԲ»¹¹, Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» և շատ ու շատ այլ գործեր: Հետագա դարերում ցույց տվեց Հայաստանում սերմանված կաթոլիկության անգործությունը և անհեռաձայնությունը: Կաթոլիկ հայերի հզոր և ստվար համայնքները ԺԴ դարի վերջերին առաջացած ծանր դրությունից դուրս գալու համար ընդունեցին մահմեդականություն, ապազգայնանալով ձուլվեցին թուրքալեզու ցեղերին:

Լ. Խաչիկյանը գրել է. «... Հայ կաթոլիկները, կտրված լինելով ազգային կենսատու ավանդություններից, ... խզեցին կապերը մայր ժողովրդից, ընդունեցին մահմեդականություն»¹²: Ավելի ուշ Ղազար Զահկեցին իր «Դրախտ ցանկալի» գործում, որպես տարիներ առաջ կատարված փաստ, նշում է. «Գեղորայքն բազումք դարձան ի կրոնս պարսից...»¹³:

Այսպիսով կարող ենք ասել, որ ԺԳ դարում սկսած ունիթորական շարժումը մեծապես վնասեց մեր ժողովրդին*, իսկ այն հայերը, որոնք ընդունեցին կաթոլիկությունը, հետագայում զոհ դարձան այս անհեռատես շարժմանը միաբանելու պատճառով:

Կ. Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» գործի աղբյուրները:—Կիրակոս Երզնկացին իր գործերում բավական մեջբերումներ ունի Աստվածաշնչից, հատկապես Ավետարաններից և Առաքելական թղթերից, ինչպես նաև Պատարագամատույցից: Բացի այս հիմնական գաղափարական աղբյուրներից, մեր կարծիքով նա ձեռքի տակ ունեցել է նաև Մովսես Երզնկացու «Ընդդիմադրութիւն» գործը: Վերջինս, ինչպես պարզել ենք, ուղղված էր Սսի 1307 թ. և Ադանայի 1317 թ. նշանավոր ժողովների կանոնների դեմ, իսկ Կիրակոսին առաջադրված հարցերը Հայաստանում վիտացող կաթոլիկ քա-

¹⁰ Տեսուն Ստեփանոսի նախագահ արքեպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկբնակաց շարադրեալ ի թուին Հայոց ԶԾԱ, Կ. Պոլիս, 1756 թ.:

¹¹ Եզնիկ արքեղա Պետրոսյան, Էջմիածին, 1974 թ. Թ—Ժ (առանձնատիպ):

¹² Լ. Խաչիկյան, Արտագի հայ իշխանությունը և Ծործորի դպրոցը, Բանբեր Մատենադարանի, ԺԱ, էջ 125—210:

¹³ Ղազար Զահկեցի, Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735 թ., էջ 333—334:

* Մինչև շոշափելի օգուտը մշակութային այս հսկա ժառանգությունն է, որ ստեղծեցին հայ միաբարները, և որը բավական նպաստավոր ազդեցություն ունեցավ ԺԴ—ԺԸ դդ. հայ մատենագրության և գիտական մտքի զարգացման վրա:

րոզիչների մեղադրանքներն էին և համընկնում էին վերոհիշյալ ժողովների ընդունած որոշումների հետ: Այսինքն, Կ. Երզնկացին պատասխանում էր նույն հարցերին, որոնց մի անգամ արդեն պատասխանել էր իր նշանավոր հայրենակիցն ու մերձավոր նախորդը: Հենց այս հանգամանքներից ելնելով էլ Կ. Երզնկացին օգտագործել է Մովսես Երզնկացու երկը:

Բերենք ասվածը հաստատող մի քանի զուգահեռ.

«Ընդդիմադրություն»¹⁴

«Եւ երկրորդ գրէ և առաքեալն Պօղոս առ Կորնթացիսն, ասելով. «Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս և ըմպիցէք զբաժակս՝ զմահ Տէառն պատմեսցիք» (էջ 49):

«Եւ այն որ ասէ սուրբն Յոհաննի մեկնութիւն Աւետարանին, թէ ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչև արարից զդոցա ըստ արքայութեան Հօր իմոյ» (էջ 50):

Հատկանշական է այն, որ այս հատվածները երկու հեղինակներն էլ օգտագործել են Պատարագի խորհրդի քննության մասում: Այս նմանությունը մեկ անգամ ևս հաստատում է այն իրողությունը, որ Կ. Երզնկացին օգտվել է Մովսես Երզնկացու նույնաբնույթ երկից:

Նույն դավանաբանական ծիսական խնդիրներին վերաբերող հատվածները երկու հեղինակներն էլ սկսում են նմանվող ձևերով: Օրինակ՝

«Ընդդիմադրություն»

«Վասն ջրոյն, թէ պարտ է խառնել ի սուրբ խորհրդոյն, որպէս այլ քրիստոնեայքն: Որոց առաջինն պատասխանի» (էջ 20ա):

Ինչպես ասվեց վերևում, Մովսես Երզնկացին պատասխանել է Սսի կանոններին և Հեթում Բ թագավորին ուղղված Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի հորդորական թղթին: Մի փոքր շեղվելով մեր հեղինակից, բայց չհեռանալով նրա թղթի մեջ արծարծված հարցերից, բերենք այս դրույթը հաստատող երկու համադրություն ևս:

«Թուղթ Անավարզեցոյ»

«Գ (3) են, որ վկայեն յերկինս՝ Հայր և Ղրդի և Հոգին Սուրբ, և Գ (3) են, որ վկայեն յերկրի՝ Հոգին և ջուրն և արինն...»:

«Եւ զՍուրբն Գրիգոր Նիսացոյն Երգ Երգոցն, որ կու ասէ, բաց զբերանդ և խմէ զջուրն ի կողէն զոր տէգըն աղբերացոյց»:

Չեռ. 2037, էջ ԺԷ

«Թուղթ առ Կարնեցիս»

«Իսկ երրորդ բանի առարկութիւն, որ ասեն. պարտ է ջուրն խառնել ի Սուրբ խորհուրդն, առ այդ պատասխանենք» (էջ 9):

«Ընդդիմադրություն»

«Գ (3) են որ վկայեն յերկինս՝ Հայր և Բան և Հոգին, և Գ (3) են, որ վկայեն յերկրի՝ Հոգին և ջուրն և արինն և Գ(3)-եան մի են» (էջ 50):

«Նաև Մեծն Գրիգոր Նիսեայ Երգ Երգոցա մեկնութենէն այսպէս գրէ. բաց զբերանդ, արբ ջուրն, զոր տէգն աղբերացոյց քեզ և զի գինին ջուր է» (էջ 50):

¹⁴ Տես Եզնիկ արեղա Պետրոսյան, Էջմիածին, 1974, Թ—Ժ, էջ 49—50:

Ուրեմն, այս գործերը իրար միանմանություն ունենալը պատահական չէ, նախ որ Սսի և Անավարզեցու թղթերը ինչ-որ կաթոլիկական ներմոծություններ են պաշտպանում, ապա թե Մովսես Երզնկացին և թե Կիրակոս Երզնկացին հակադրվում են դրանց, ապա վերջինս անշուշտ իր հակաճառության մեջ օգտվում է Մ. Երզնկացու գործից:

Այսպիսով, պարզվում է, որ ԺԴ դ. սկիզբներին հայ իրականության մեջ պապականության սերմանած կրոնա-դավանաբանական այս խլրտումների գրական երեք աղբյուրները սերտ կապ ունեն միմյանց հետ: Առաջինը Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսի Հեթում Բ թագավորին ուղղված թղթի, Սսի 1307 և Ադանայի 1317 թթ. ժողովների կանոնների ամբողջությունն է, որ ինչպես պարզվել է վերջերս կատարված մի ուսումնասիրությամբ, ԺԴ դ. սկիզբների կիլիկիահայ միարար վերնախավի (կաթողիկոսարանի և արքունիքի) ստեղծած և շրջաբերականի պահանջի նպատակադրմամբ հայոց բոլոր թեմեր առաքված պաշտոնական փաստաթուղթ էր¹⁵: Երկրորդը՝ Մովսես Երզնկացու «Ընդդիմադրությունը» առաջինի ուղղակի և շիտակ պատասխանն է, և ըստ այդմ, այդ փաստաթղթի ետևում կանգնած եկեղեցական-քաղաքական հոսանքի հակառակորդների ավանդական-ազգային հավատամքը: Իսկ երրորդը՝ Կ. Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» երկը, որը մեր հետազոտության բուն խնդիրն է, ուղղված է նույն երևույթի մի այլ դրսևորման դեմ, այն պահանջները, որ պապականությունն իր քարոզիչների ու դեսպանների բերանով ներկայացնում էր կիլիկիահայ վերնախավին և որոնք ընդունվեցին Սսի և Ադանայի հիշյալ ժողովներում, նույն քարոզիչներն ու Կարնո հայության մեջ նրանց որս դարձած նորադարձ կաթոլիկները ներկայացնում էին Կարինի ողջ հայությունը: Վերջինս ստեղծված նուրբ կացությունից ելք գտնելու համար դիմել էր ժամանակի նշանավոր ուսուցչապետներից մեկին՝ Կիրակոս Երզնկացուն: Հ. Երզնկացին էլ չէր ուշացրել խնդրված օգնությունը և իր խնդրարկումներին էր տվել գաղափարական մի հզոր զենք՝ իր այս թուղթը: Զենքի բարերար ուժը շուտով զգացվել է, ուստի և այս ուղարկվել է նույն «սուտ եղբայրների» ձեռքից տառապող հայկական այլ կենտրոններ ևս: Երկպառակության հոռմեական սերմերով վարակված այս քաղաքներում (Անի, Թիֆլիս, Նախիջևան, Թավրիզ) նույնպես օգտագործվելով, Երզնկացու թուղթը դարձել է կաթոլիկների դեմ պայքարի գործնական ուղեցույց և Հայ եկեղեցու հետևորդներին ծառայել հետագա (հատկապես ԺԶ—ԺԸ) դարերում ևս:

¹⁵ Յ. Հ. Վարդանյան, Ներսես Պալիանենցին վերագրված ժամանակագրական մի ցանկի մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1980, Գ, էջ 189—202: